**Նոր տարի (Ամանոր)**

Ըստ պատմական տվյալների, վաղ ժամանակներում հայերը Նոր տարին նշել են մարտի 21-ին՝ գարնանային գիշերահավասարի օրը: Բնությունը հարություն է առնում գարնան սկզբին, և հայ մարդը այդ օրն էլ դարձրել է Նոր տարի և նշել շքեղ տոնախմբությամբ՝ փառաբանելով բնության զարթոնքը, ակնկալելով բերքառատ տարի:
Հայկական երկրորդ տարեգլուխը եղել է Նավասարդի 1-ը (օգոստոսի 11-ը) և տևել է մինչև սեպտեմբերի 9-ը: Ըստ ավանդության, Հայկ նահապետը Հայոց ձոր գավառում սպանել է բռնակալ Բելին՝ ազատություն պարգևելով իր տոհմին ու հետնորդներին: Ենթադրաբար դա տեղի է ունեցել մ. թ. ա. 2492թ. օգոստոսի 11-ին: Օգոստոսյան տոնը հայերը կոչել են Նավասարդ: Բառը կազմված է նավա/նոր և սարդ/տարի բառերից և նշանակում է Նոր տարի:
18-րդ դարում, Սիմեոն Երևանցի կաթողիկոսի օրոք, որպես Նոր տարվա սկիզբ ընդունվեց հունվարի 1-ը (համապատասխանեցնելով քրիստոնեական մի շարք երկրներում ընդունված տարեսկզբի հետ): Միայն 20–րդ դարի սկզբներից համընդհանուր դարձավ հունվարի 1-ը, որպես տարվա սկիզբ, տոնելը: Հիշատակվում են տոնի տարբեր անուններ՝ Ամանոր, Տարեմուտ, Տարին Գլուխ, Նոր տարի, Կաղանդ, Կաղինդ, Կալոնտար, Կալանտար: Նոր տարուն նախորդող գիշերն էլ հայտնի էր Լոլեի գիշեր, Խլվլիկ, Կախ կամ Կաղ անուններով, իսկ համշենահայերի մոտ՝ Ծաղկըմուտ:
Նոր տարին սկսվում էր դեկտեմբերի 30 - 31-ին՝ ամանորյա խմորեղեն պատրաստելով: Խմորեղենի մեջ ամենագլխավորը «Տարի հաց», «Կրկենի», «Դովլաթ կրկենի», «Կլոճ», «Փուռնիկ» և այլ անուններով ծիսական հացն էր: Տարբեր տեղերում այդ հացի բաղադրատոմսերը, ձևը տարբեր էր: Այն կարող էր լինել գաթա, բաղարջ, ձվաձև, կլոր, խաչաձև, եռանկյունի, քառակուսի և այլն: Կարող էր զարդարված լինել զանազան զարդանախշերով, ընկույզով, չամիչով, սերմերով, պտուղներով: Գլխավորն այն է, որ հացի մեջ որևէ նշան էր դրվում՝ կորիզ կամ լոբի կամ ուլունք, ավելի հաճախ՝ դրամ: Տարի հացը տարբեր տեղերում տարբեր օր են կտրում՝ տարեմուտի ընթրիքին, հունվարի 1-ի առավոտյան, հունվարի 4-ին,

հունվարի 5-ին՝ ճրագալույծին, հունվարի 6-ին՝ ծննդին: Ըստ մատենագիտական նյութերի, հնում «Տարի» հացը բաժանել են 12 մասի՝ իբրև 12 ամիսների խորհրդանշան: Բաժանել են նաև տան բոլոր անդամների թվին հավասար: Հաճախ բաժին են հանել նաև տան կենդանիներին, արտին, հանդին: Ում բաժին ընկներ նշանը, այդ տարի նա երջանիկ կլիներ կամ ընտանիքի հաջողությունը նրանից կգար:
«Տարի» հացից բացի թխում էին զանազան ձևերի ու մեծության այլ խմորեղեններ, որոնք ունեին կանխատեսելու նպատակ, ինչպես նաև հմայական խմորեղեններ: Վերջիններից էին, օրինակ, կլոր, մեջը ծակ, ցորենով ու գարիով զարդարված «հացի հոր», «գարու հոր» կոչվող խմորեղենները: Թխում էին ընտանիքի եկամուտը խորհրդանշող աշխատանքային գործիքի պատկերով խմորեղեն՝ արոր, գութան, խնոցի, մկրատ, մատնոց, ուրագ և այլն, որևէ ցանկություն խորհրդանշող պատկեր՝ քսակ, պայտ, կողպեք, հասկ: Շատ տեղերում թխում էին մարդակերպ թխվածքներ, որոնք կոչվում էին «Ասիլ-Բասիլ», «Վասիլ»: Սրանք խորհրդանշում էին բնության մեռնող ու հարություն առնող աստվածներին՝ Նարին, Արա գեղեցիկին: Մարդակերպ հացիկների աչքերի, բերանի կրծքին դրված ձեռքրի վրա չամիչներ էին դնում: Թխվելու ընթացքում դրանց ուռելը կամ սմքելը դրական կամ բացասական գուշակություն էր տվյալ տարվա համար:
Զևավոր հացերով ոչ միայն գուշակություններ էին անում, այլև շնորհավորում էին միմյանց տոնը և դրանցով «կաղանդում» ջուրը: Նոր տարվա նախորդ գիշերը կանայք և երիտասարդ տղամարդիկ իջնում էին գյուղի աղբյուրը և կաղանդում ՝ շաղ տալով նրա մեջ սերմեր, պտուղներ կամ թրջելով ծիսահացերը: Հավատում էին, որ ճիշտ կեսգիշերին ջրի տեղ աղբյուրից ոսկի է հոսում (ընդամենը մի պահ) և աշխատում էին հենց այդ պահին աղբյուրից ջուր բերել:
Թիֆլիսահայերը թխում էին երկու հաց, որոնք կոչվում էին «Էգ» և «»Չիք»: «Էգը» ողջ տարին պահում էին ալյուրի մեջ, որ ալյուրը շատանա, իսկ «Չիքը» գցում էին հոսող ջուրը, որ չարիքը անցնող ջրի նման չքանա:
Նոր տարվա նախորդ օրն ու գիշերը 10 -12 տարեկան տղաների խմբերը շրջայց էին կատարում համագյուղացիներին: Նրանք երգելով տուն էին

մտնում կամ երդիկից դատարկ տոպրակ իջեցնելով՝ ավետում էին տարվա ավարտը, Նոր տարվա գալուստը: Երգերի տեքստի միջոցով գովերգում էին ընտանիքի անդամներին, տունը, հղում էին բարեմաղթանքներ և թվում իրենց սպասելիքները տանտերերից: Երբեմն իրենց սպասելիքները արտահայտում էին Գալանտոսի, Հարսի, Նորի անունից, որոնք Նոր տարվա ծիսական կերպարներ էին: Նորը, Հարսը, Գալանտոսը եկել է՝ լրիվ նոր ու առատ, շալե շապիկով ու կարմիր գոտիկով, եկել է որպես Նոր տարի և համեստորեն համաձայն է «մեկ ավուճին»: Տանտիկինները կախված տոպրակի մեջ դնում էին մրգեր, հատուկ այդ նպատակով թխված խմորեղեն, ընդեղեն, չամիչ և այլն:
Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում հայտնի էր «Կախու», «Կախուկ» կամ «»Գոտեկախի» սովորույթը, որն արևելյան Հայաստանում հայտնի էր նաև «Ճլոլանք» անվամբ. երիտասարդ աղջիկներն ու պատանիները Նոր տարվա նախորդ գիշերը փոքրիկ խմբերով տոպրակներ, գուլպաներ կամ կողովներ առած շրջում էին երդիկից երդիկ և դրանք պարանով երդիկից ցած իջեցնելով՝ բարեմաղթանքի երգեր էին ասում ու շնորհավորում տնեցիներին: Տանտիկինը կախվածի մեջ զանազան ուտելիքներ էր լցնում: Արցախում և Սյունիքում գոտեկախի սովորույթը հայտնի էր հակառակ տարբերակով: Պատրաստում էին ընկույզի, չոր մրգերի ու եփած հավերի շարան, որը կոչվում էր «Ճլոլունք», և իջեցնում էին հարազատների, իսկ ավելի հաճախ՝ խնամիների երթիկից ցած:
Նոր տարվա գիշերը Նոր Նախիջևանցիները վախենում էին «Խոնջոլոզների» և «Առայիմ-թառայիմ» երևալուց: Խոնջոլոզները չարդախներում ապրող էակներ էին, պատռված հագուստներով, որոնց ծվեններից երկաթե գնդեր էին կախված: Եթե նրանց հաջողվում էր որևէ մեկին բռնել, նստում էին նրա վրա և ճնշում իրենց ծանրության տակ: Առայիմ-թառայիմները կարող էին մտնել հնոցների ծխնելույզից և դուրս գալ վառարանի դռնից: Սրանք պատկերացվում էին երկաթե երկար եղունգներով, երկար ու սպիտակ մազ-մորուքով և հիշեցնում էին պարսկահայերի «Խլվլիկը»:
Որոշ տեղերում հմայում-հեռացնում էին բոլոր չարիքները: Տան անդամներից մեկը, բարձրանալով տան տանիք, փայտով, կացնով կամ այլ իրով աղմուկ  էր բարձրացնում: Ներքևից մեկը հարցնում էր.

- Ի՞նչ ես անում:
- Ցավ եմ կտրում:
- Ու՞ր պիտի ուղարկես:
Վերևինը տալիս էր որևէ հեռու երկրի կամ տեղի անուն, ուր ուղարկվում էր նշված վատ բանը: Այսպես երկխոսությունը շարունակվում էր այնքան, մինչև տան առկա և հնարավոր դժբախտությունները, կարիքները, չարիքը ուղարկեին, հեռացնեին:
Պոնտոսի շրջանում տանտերը մի ջիթենու ճյուղ էր կտրում բերում տուն՝ իբրև կաղանդի ծառ, զարդարում կաղիններով ու ընկույզներով, իսկ առավոտյան տանում էր եկեղեցի՝ քահանային օրհնել տալու:

Նոր տարվա տոնական խնջույքը սկսվում էր դեկտեմբերի 31-ի ընթրիքով: Ընդհանրապես, Նոր տարվա սեղանին պարտադիր էին 7տեսակ միրգը և 7ճաշատեսակները: Տան բոլոր անդամների ներկայությունը պարտադիր էր: Տան մեծը բարձրացնում էր բաժակը, օրհնում սեղանը, շնորհավորում տնեցիների Նոր տարին և առաջարկում բոլորին՝ առաջին բաժակի հետ մեղր համտեսել.- «Անուշ մեղր ուտենք, որ տարին բոլոր անուշ զրուցենք, անուշ վարվենք»: Որոշ տեղերում ընթրիքն սկսելուց առաջ տան գլխավորը երեք բուռ կաղին, ընկույզ էր նետում դեպի տանիք «Շեն կենա Կալանտար, բարով Կալանտար ըլլա» խոսքերով, վստահ, որ նետված կաղին-ընկույզը առաջիկա տարվա առատությունը պիտի ապահովի: Ամբողջ գիշեր տան ճրագը չէր մարում: Ընթրիքից հետո սկսվում էին տոնական այցելությունները: Որոշ տեղերում այդ այցելությունները կատարվում էին առավոտյան: Տան դուռը տոնական օրերին չէր փակվում: Վաղ առավոտյան տան մեծը մատուցարանի մեջ շարում էր հաց, գինի, մեղր և 4 խնձոր, որոնց վրա մեղրամոմ էր վառվում: Մատուցարանը տանելով տան չորս անկյունները, նա ասում էր. «Անուշ արեք, ովքեր չեք երևում, նորհավոր Նոր տարի»: Ապա դուրս էր գալիս և աղոթում Աստծուն, խնդրելով, որ ամբողջ տարին իր տան համար ավցնի այնպես քաղցրությունով, ինչպես քաղցր է մատուցարանը, տուն մտնում, տան բոլոր անդամներին հրավիրում ճաշակելու հացից ու մեղրից, ասելով՝ «Էսպես քաղցր պառավես»: Վերջապես մեղրից խաչաձև քսում էր դռան ճակատին և վառված մեղրամոմի ծխով սևացնում քսած տեղը, մի կարմիր շոր կապում և,

ներս մտնելով, երեխաներին բաժանում նրանց համար թխված խմորեղենները:

Երեխաների սիրված խաղերից էին վեգը և ընկուզախաղերը: Գետնին փոքրիկ փոսեր են փորում, ապա հերթով, մեկը մյուսի հետևից, ընկույզը գլորում այնպես, որ առանց նշանակված գծից շեղվելու՝ ընկույզն ընկներ մի փոսի մեջ: Հաջողվածը բոլոր գլորած ընկույզները յուրացնում էր: Մեկ այլ խաղում խաղացողները մի մետր տրամագծով շրջան էին գծում և մեջտեղը ուղիղ գծով ընկույզներ շարում: Երեք – չորս մետր հեռավորությունից գցում էին վեգերը՝ աշխատելով խփել ընկույզներին և գոնե մեկը դուրս հանել շրջանից, որով և շահում էին շարված բոլոր ընկույզները:

Որոշ տեղերում ընկույզից պատրաստում էին «Չարխափաններ»՝ չարը քշող, վախեցնող, չքացնող, խափանող: Նախօրոք վերցնում էին 20 – 25 սմ երկարության թելեր, հագուցում՝ որքան հնարավոր է մեծ գլխով, դնում կեղևների արանքը և սոսնձում: Երբեմն կեղևների մեջ էին լցնում ցորեն կամ այլ մանր հատիկներ: Մի քանի այդպիսի ընկույզների թելերը կապում էին իրար, որն էլ դառնում էր «Չարխափան»: Երբ այն թափահարվում է, շրխկում է: Հենց այդ շրխկոցն էլ «վախեցնում և քշում է չարին»:

Նոր տարվա օջախն առանձնահատուկ էր, երբ նորոգվում էր կրակը, իսկ շատ տեղերում մի մեծ քոթուկ էին դնում օջախի մեջ՝ աստիճանաբար առաջ մղելու պայմանով այնպես, որ մինչև ծնունդ կրակն անմար մնար: Բոլոր դեպքերում անմար էր պահվում Նոր տարվա գիշերվա և հաջորդ օրվա՝ հունվարի 1-ի օջախը: Ավելի ուշ, ծննդյան երեկոյին վերցնում էին այդ քոթուկից մնացած խանձողները, տանում հանդերում թաղում, որպեսզի ապահովեին բերքի առատությունը, կանխեին կորուստը, կարկուտը:

**Նոր տարի (Ամանոր) – այլ աղբյուրից**

Վաղ ժամանակներում հայերը Նոր տարին նշել են մարտի 21-ին՝ գարնանային գիշերահավասարի օրը: Գարնան սկզբին բնությունն արթնանում է, հայ մարդը որոշել է, որ այդ օրը տարվա սկիզբն է:

Հայկական երկրորդ տարեգլուխը եղել է Նավասարդի 1-ը(նավա-նոր, սարդ-տարի), որն համընկնում է այժմյան օգոստոսի 11-ի հետ, և տևել է մինչև սեպտեմբերի 9-ը:
18-րդ դարում, Սիմեոն Երևանցի կաթողիկոսի օրոք, որպես Նոր տարվա սկիզբ ընդունվեց հունվարի մեկը: Տոնն ունեցել է տարբեր անուններ՝ Ամանոր, Տարեմուտ, Տարին Գլուխ, Նոր տարի, Կաղանդ, Կաղինդ, Կալանտար, Կալոնտար:
Տոնական սեղանին դրվող ամենագլխավոր խմորեղենը «Տարի հաց», «Կրկենի», «Դովլաթ կրկենի», «Կլոճ», «Փյունիկ» և այլ անուններով ծիսական հացն էր: Այն կարող էր լինել գաթա, բաղարջ, ձվաձև, կլոր, խաչաձև, եռանկյունի, քառակուսի և այլն:

Նոր տարվա նախորդ օրն ու գիշերը 10-12 տարեկան երեխաները խմբերով շրջայց էին կատարում համագյուղացիներին: Նրանք երգելով տուն էին մտնում կամ երդիկից դատարկ տոպրակ իջեցնելով՝ ավետում էին տարվա ավարտը, Նոր տարվա գալուստը: Գովերգում էին ընտանիքի անդամներին, բարեմաղթանքներ հղում: Սովորաբար տոնը, ծեսը ուներ ծիսական կերպար(կերպարներ), որի(որոնց) անունից արտահայտում էին իրենց սպասելիքները տանտերերից: Տանտիկինները կախված տոպրակի մեջ դնում էին մրգեր, խմորեղեն, ընդեղեն, չամիչ և այլն:
Պոնտոսի շրջանում տանտերը մի ձիթենու ճյուղ էր կտրում բերում տուն՝ իբրև կաղանդի ծառ, զարդարում կաղիններով ու ընկույզներով, իսկ առավոտյան տանում էր եկեղեցի՝ քահանային օրհնել տալու:

Տոնը սկսվում էր դեկտեմբերի 31-ի ընթրիքով: Սեղանին պարտադիր դրվում էր 7 տեսակ միրգ, 7 ճաշատեսակ և այլ ուտեստներ: Տան բոլոր անդամների ներկայությունը պարտադիր էր: Ընթրիքից հետո սկսվում էին տոնական այցելությունները:

Երեխաների սիրված խաղերից էին վեգը և ընկուզախաղերը:
- Գետնին փոքրիկ փոսեր էին փորում, ապա հերթով, մեկը մյուսի հետևից, ընկույզը գլորում այնպես, որ որ առանց նշանակված գծից շեղվելու, ընկույզն ընկներ փոսի մեջ: Ում հաջողվում էր անել, բոլոր գլորած ընկույզները նրանն էին:

- Խաղացողները մի մետր տրամագծով շրջան էին գծում և մեջտեղը ուղիղ գծով ընկույզներ շարում: Երեք-չորս մետր հեռավորությունից գցում էին վեգերը: Եթե թեկուզ մեկն էին շրջանից դուրս հանում, շահում էին շարված բոլոր ընկույզները:

Որոշ տեղերում ընկույզից պատրաստում էին «Չարխափաններ»՝ չարը քշող, վախեցնող, չքացնող, խափանող: Վերցնում էն 20սմ և ավելի երկարություն ունեցող թելեր, մեկ ծայրը հագուցում՝ որքան հնարավոր է մեծ գլխով, դնում կեղևների արանքը և սոսնձում: Մի քանի այդպիսի ընկույզների թելերը կապում էին իրար, որն էլ դառնում էր «Չարխափան»: Հայ մարդիկ հավատում էին, որ այդ շրխկոցը «վախեցնում և քշում է չարին:»

## Սուրբ Ծնունդ (Աստվածահայտնություն)

Նոր տարուն հաջորդում են Ծնունդ (Աստվածահայտնություն), Զրօրհնեք (Մկրտություն) տոները: Մեր եկեղեցին Սուրբ ծնունդը նշում է հունվարի 6-ին: Այդ օրը մատուցվում է ս. Պատարագ, և մարդիկ իրար ողջունում են՝ ասելով. «Քրիստոս ծնավ և հայտնեցավ, օրհնյալ է Ծնունդը Քրիստոսի»: Համաձայն եկեղեցական ավանդության՝ Քրիստոսը Հովհաննես Մկրտչից Հորդանան գետում մկրտվեց այն օրը, երբ լրացավ նրա 30 տարին: Այդ պատճառով Հայոց եկեղեցին Սուրբ ծննդյան և Աստվածահայտնության տոները կատարում է միևնույն օրը: Հունվարի 5-ի երեկոյան վառում են եկեղեցու բոլոր կանթեղները, մատուցվում է Ճրագալույցի ս. Պատարագ: Հետաքրքիր է, որ ճրագալույցի ս. Պատարագ տարին ընդամենը 2 անգամ է մատուցվում՝ Ս. Ծննդյան և Ս. Հարության տոներին: Ճրագալույց նշանակում է ճրագ, /մոմ/ լուցանել, այսինքն՝ վառել: Այդ օրը մարդիկ եկեղեցում վառված ճրագներն իրենց հետ տուն են տանում: Այն խորհրդանշում է աստվածային լույս, եկեղեցու օրհնություն: Ճրագալույծը խորհրդանշում է բեթղեհեմյան աստղի լույսը, որն առաջնորդեց մոգերին դեպի Հիսուս Մանուկ:

Հունվարի 6-ին՝ Ս. Ծննդյան Պատարագից հետո, կատարվում է նաև Զրօրհնեքի արարողություն: Ջուրն օրհնվում է սուրբ Խաչով, Սուրբ Ավետարանով և Մյուռոնով: Հավաքվածներն անմիջապես օրհնված ջրի մեջ

թաթախում են իրենց ձեռքերը, քսում մարմնի հիվանդ մասերին՝ համոզված, որ օրհնված ջուրը կլավացնի իրենց: Այս հանդիսությունը նկատի ունենալով էլ ժողովուրդը այդ տոնն անվանել է «Ջրօրհնեք» կամ «Խաչը ջուրը գցել»:

Հունվարի 5-ի երեկոն բոլոր հայ ընտանիքներում թաթախման երեկո էր, երբ, ժամերգությունից վերադառնալով, պասը բացում էին ծննդյան տոնին ընդունված ճաշատեսակներով: Ժամերգությունից տուն դարձողներն իրենց հետ տանում էին այնքան մոմ, որքան անդամ կար տվյալ ընտանիքում: Ընտանիքի յուրաքանչյուր անդամի սպասքի առաջ վառում էին նրա համար նախատեսված մոմը և , մոմերի լույսի ներքո, բոլորում սեղանի շուրջ: Այդ երեկո սեղանի գլխավոր զարդը ձկնեղենի զանազան տեսակներից պատրաստված խորտիկներն էին՝ խաշած, տապակած, ձկով կարկանդակ, խորոված ձուկ և այլն: Դրվում էին նաև բրնձի, ձավարի, արիշտայի խառը կամ անխառն փլավները՝ առատ յուղով օծված, ալյուրից պատրաստված ու դոշաբով կամ մեղրով քաղցրացրած խաշիլը, սիսեռով ու չորացրած բանջարեղենով ապուրը, որ հայտնի է «Մայրամա ճաշ» անունով:

Ընտանիքը նոր էր բոլորած լինում ընթրիքի սեղանի շուրջ, երբ սկսվում էր «Ավետիս» երգող խմբերի այցը: Սպիտակ շապիկ հագած պատանիների 3-5, երբեմն՝ 6-7 հոգիանոց խմբերը շրջում էին տնետուն: Առջևից գնում էր «շուն թակողը»՝ մահակը ձեռքին, (սա պետք է քշեր հարձակվող շներին), նրան հետևում էին «ալյուր տանողը»՝ տոպրակը շալակին, «ձու հավաքողը»՝ թասը գլխին և մյուսները: Նրանցից մեկը կամ երկուսը մտնում էին տուն, իսկ մյուսները բարձրանում էին տան տանիքը և երդիկից պարանով կամ գոտիներով կախում տոպրակ կամ գուլպա կամ քթոց (սալա): Երգում էին «Ավետիս», որոնք շատ բազմազան էին: Դրանցում դրսևորված էին Քրիստոսի ծննդյան ու կյանքի վերաբերյալ ժողովրդական պատկերացումները, գովերգվում էին Փրկչի առաքինությունները, հրաշագործությունները և այլն: Սակայն կային Քրիստոսի հետ կապ չունեցող երգեր, որոնցում հնչում էր ընտանիքին արվող բարեմաղթությունների թեման, և, այնուամենայնիվ, որպես ծննդյան երգեր, դրանք նույնպես կոչվում էին «Ավետիսներ»: Բոլոր երգերը վերջանում էին «Քրիստոս ծնավ և հայտնեցավ, մեզի, ձեզի մեծ ավետիս» խոսքերով:

Ավետիս պտտողներին գյուղացիները տալիս էին ձու, յուղ, դրամ և ուրիշ նվերներ:

**Ամանորյա և ծննդյան երգեր**

- Ձեր տան սներ ծառ ին խնկի,

Պատեր շարուկ մարմար քարեն,
Ալաշ վերեն ծալ-ծալ ոսկի,
Խողն ի վերեն սուրբ մարգարիտ,
Խարսներ ինի՝ քանց աղունակ,
Ավելն ի ձեռ՝ փունջ մանուշակ,
- Ձեր անդրանիկի անուն ի՞նչ ի:
- Արամ ի:
- Արամ ճութ էր, էլ ճթացավ,
Քանց բարդի ծառ էլ հերկնցավ,
Քանց ուռի ծառ էլ կանաչավ,
Քանց կաղնի ծառ էլ պնդացավ,
Ճղեր թալեց քաղքե-քաղաք,
Ամեն ճղին՝ ջուխտմ ճրագ,
Արամ նստեր ծառի տակին,
Գավաթն ի ձեռ նռան գինին:

- - Ձեր տուն մտնի խազար բարի,

Հաճար, ցորեն, կորեկ, գարի,
Լիքը խորեր շատ ունենաք,
Կարմիր օրեր շատ ունենաք,
Կարմիր օրով, կարմիր շորով,
Ուրախ կենաք՝ լիքը տնով:

- - Մամիկ, մամիկ, ես քե ծառա,

Դուռ մառանին մեկ գյավ արա,
Սոլեր խազի, որ ճռվռա,

Կութնին խագի, որ խշխշա,
Մաղմ կոքյով, մեկ էլ չամիչ,
Բեր տղեքներ ճամբխու արա:

ալաշ - ծղոտ
ինի - մեջ
ճութ - ամուր
գյավ – քայլ
կութնի – մետաքսյա շրջազգեստ
կոքյով – ընկույզ

- Ծառ մի կանչեր, ծառ մի կանչեր, ավետիս,

Շարոց բերեք, պաստեղ բերեք, ավետիս,
Մեր հարսներուն փայն ալ բերեք ավետիս,
Գինի բերեք, գաթա բերեք, ավետիս,
Չիր ու չամիչ հետը բերեք, ավետիս,

Ամեն տարի հասնինք բարով, ավետիս,
Երկար կենոք, առողջ անձով, ավետիս,
Մի կենաք հետ մարդու խռով, ավետիս,
Այլ խոսեցեք անուշ լեզվով, ավետիս,
Որ դուք մնաք երկար ամով, ավետիս:

- Այսօր տոն է ծննդյան, ավետի՜ս,

Աշխարհ լցվավ լիություն, ավետի՜ս,
Մեր տերն էլավ նախատակ, ավետի՜ս,
Տժողքն էլավ խորտակ, ավետի՜ս,

Ապա մեղեդին փոխվում էր.

Մարիամն կենաց տուռն հերին, ալելույա՜,
Ծնավ, պիրեց Հիսուս որդին, ալելույա՜,

Քրիստոս որդի կյրկանոցին, ալելույա՛,
Քյավոր՝ Սիմոն խերն արեցին, ալելույա՛:

Սրան հաջորդում էր հարց.
- Ինչպե՞ս է ձեր փոքրիկի անունը:
- Գրիգոր:
- Գրիգորի ճութ ճըթացավ, ալելույա,
Քյանց բարդի ծառ հերկնցավ, ալելույա,
Խեր կերավ՝ խպարտացավ, ալելույա,
Մեր կերավ՝ զվարթացավ, ալելույա,
Քյոր կերավ՝ խորոտկցավ, ալելույա,
Ախպեր կերավ՝ հայլորցավ, ալելույա,
Մամիկ կերավ՝ ջըհելցավ, ալելույա,
Պապիկ կերավ՝ անմախացավ, ալելույա,
Խորքուր կերավ՝ գյումրախացավ, ալելույա,
Խորոխպեր կերավ՝ գյումրախացավ, ալելույա,
Քեռաղեն կերավ՝ առողջացավ, ալելույա,
Քեռմամեն կերավ՝ բախտավորցավ, ալելույա,
Մորքուր կերավ՝ ինգավ թոնիր, կոտն իրիցավ, ալելույա,
Քյանիմ կերան՝ չպստկցավ, ալելույա, չպստկցավ, ալելույա:

**Ավետիս**

Բարով, բարով էս տաճարով, ավետիս, ավետիս,
Սուն ու գերան հազարաշեն, ավետիս, ավետիս:

Աս տուն շինած գարնան ծաղկով, ավետիս, ավետիս,
Աս տան քարեր սուրփ մարկըրիտ, ավետիս, ավետիս:

Կըտեր հողը խնկան փոշի, ավետիս, ավետիս,
Հողի վրեն ծալած ոսկի, ավետիս, ավետիս:

Թոնիրները եկեղեցի, ավետիս, ավետիս,
Լավաշները գործած խաչեր, ավետիս, ավետիս։

Հացթուխները խանում-խաթուն, ավետիս, ավետիս,
Հարսներ բոլոր քանց եղվընիկ, ավետիս, ավետիս։

Տուն ավլողը ջուխտ աղունակ, ավետիս, ավետիս
Ձեռ ավելը փունջ մանուշակ, ավետիս, ավետիս։

**Հասմիկ Բաղրամյան՝ «Ազգային ծեսեր, տոներ»**

Գերբնական ուժերի և ժամանակի մասին պատկերացումները երկար ժամանակի ընթացքում միավորվում են մի կուռ և խիտ համակարգի մեջ, և այդ համակարգի խարսխող ուժը ծեսն է:
Ըստ Վ. Թյորների, «Ծեսը գործողությունների ստերեոտիպային հերթականությունն է, որը ընդգրկում է շարժում, խոսք և առարկա, կատարվում է հատուկ պատրաստված տեղում, նախատեսված է ծեսը կատարողների նպատակների և շահերի համեմատ գերբնական ուժերի կամ էակների վրա ազդելու համար»:
Ինչպես է ծեսն աստիճանաբար վերաճում տոնի. այս առումով բացառիկ հետաքրքիր է Օ. Ֆրեյդենբերգի տեսակետը: Ըստ Ֆրեյդենբերգի, տոնն սկզբնական շրջանում եղել է ծիսական արգելքների օր և ոչ հանգստի: Այս տեսակետի ճշմարտացիության մեջ համոզվելու առիթները շատ են, որոշակի տոնի ժամանակ գործում է արգելքների համալիր. այդ օրը օճառ չօգտագործելու, գլուխ չլվանալու, կրակ չանելու, կչակը տանից չհանելու, ճանապարհ չգնալու, գործ չանելու, սեռական հարաբերության մեջ չմտնելու և այլ արգելքներ, որոնք պահպանվում են առ այսօր: «Տոնն արդեն կենցաղի և կրոնի համագոյակցությունն է և շատ ավելի ուշ երևույթ է՝ հակառակ կենցաղային պարզ արարողության , որն իր պարբերականությամբ ամրագրված է և կայուն կապի մեջ է մեկ որոշակի դեպքի, մեկ որոշակի ամսվա և օրվա, նույնիսկ ցերեկվա և գիշերվա որոշակի ժամեր հետ»: Այսինքն՝ տոնը, ինչպես և տոմարը, ենթադրում է

հասարակության կայացած կառույց և կրոնի տաճարային զարգացած ինստիտուտ:
Ծեսը վերածվում է տոնակատարության, տոնն սկսում է ամրագրվել որոշակի անունով: Աստիճանաբար տոնա-ծիսական համալիրի անվանումը փոխանցվում է ժամանակի այն հատվածին, երբ այդ տոնը կատարվում է, ասենք Բերքի տոն և համապատասխան օր, Նոր Գինու ամիս և այլն:

## Ամանորի տոնա-ծիսական համալիրը

Ամանորյա երկու տոները՝ կաղանդ-Նոր տարին և Ս.Ծնունդ-Հայտնությունը, կառուցված են միևնույն ձևով և ընդգրկում են ավանդական հետևյալ ծեսերը:

### Մաքրագործման արարողություններ

ա.արտաքին. «տան, բակի, զգեստի, մարմնի մաքրում»
Մաքրում էին տունը, բակը, գոմը, հավաբունը: Մաքրելու գործողություններին մասնակից էին տան բոլոր անդամները՝ մեծ, փոքր, տղամարդ, կին: Հունվարի մեկին բերած ջրով լվացվում էր ամբողջ ընտանիքը, որն այդ նպատակով հավաքվում էր թոնրի շուրջ: Բաբերդում կաղանդի օրը կանայք ոջիլներ էին լցնում թոնիրը: Համարում էին, որ դրանից բարձրանում էր հավերի ձվատվությունը: Լոռում, ինչպես շատ այլ շրջաններում, ընդունված էր նաև լվացք անել: Համշենցիները դեկտեմբերի 31-ին, որն այստեղ Ծաղկըմուտ է կոչվում, տուն-երդիկ ավլելուց հետո աղբը գցում էին ջուրը: Նույն շրջանում Նոր տարվա առավոտյան երկու տղա ձեռնապայտով կամ կացնի կոթով թխկթխկացնում էին կաղնու ճյուղերից հյուսված առաստաղին՝ ծածելին և ծիսական երկխոսությամբ արտաքսում մկներին, ցավերը և ամենայն չարիքը:

բ. ներքին. <<չկռվել, չհայհոյել, չանիծել, չբամբասել>>
Լոռում տանտիկինը մեղր էր քսում ընտանիքի բոլոր անդամների բերաններին: Համշենում ոչ կծու կերակուր էին ուտում, ոչ էլ իրար թթու

խոսք ասում: Այս սովորությունները կապվում են խոսքի մոգության հետ: Անցումային այդ օրը յուրաքանչյուր չար խոսք կարող էր չարիք բերել ամբողջ տարվա համար: Բացի այդ խոսքը կարող էր պղծել օրվա ծիսական մաքրությունը:

գ. նորոգման արարողություններ

Ընտանիքի բոլոր անդամները Նոր տարվա օրը պետք է հագնեին նոր զգեստ, հատկապես երեխաները: Թխում էին թարմ հաց, նույնիսկ եթե տանը կար բավականաչափ հաց: Նոր զգեստ, նոր հաց-նոր կյանք զուգահեռն ակնհայտ է:

*Հաղորդակցման արարողություններ*

ա. հաղորդակցություն ուտելիքի հետ և ուտելիքի միջոցով. <<առատ սեղան՝ կերակրատեսակների հատուկ համալիրով>>:
Կաղանդը ուտիս օր չէ, պաս օր է: Եվ որքան էլ առատ լիներ տոնական սեղանը, մսեղեն կերակրատեսակը բացառվում էր: Գերապատվությունը տրվում էր լոբուն և ոսպին, բազմազան քաղցրեղենին, չիր ու չարազին: Լոբին պարտադիր կերակուր էր. հավատում էին, որ առանց լոբու տարին չի գա: Պրուսայի Կաղանդի սեղանին լոբին ներկա էր իր ողջ տեսականիով. դեկտեմբերի 30-ի երեկոն կոչվում էր <տարուբեր>, քանի որ փոխանակվում էին լոբու տեսակներ և այլ կերակրատեսակներ: Համշենում լոբին շաղ էին տալիս կենդանիների վրա, ասելով. <Խատ ու խլինջ,մեղվի պես շատնաք>:

բ. հաղորդակցություն կրակի և արևի հետ

Բազում ազգագրական շրջաններում Նոր տարվա երեկոյան այրում էին տարեմտի քյութակ՝ մեծ գերան, որի մի ծայրը դրվում էր կրակի մեջ և այրվելու ընթացքում այն աստիճանաբար ներս էին հրում: Այս գերանը պետք է անընդհատ վառվեր մինչև Ս.Ծնունդ: Դրա ածուխը պաշտպանում էր կարկտից: Ամեն մի հյուր պարտավոր էր մի կտոր փայտ ավելացներ

թոնրին: Գիշերը անպայման որևէ լույս վառ էին թողնում: Մութն ընկնելուն պես ապլան շեմին մոխիր էր ցանում՝ չարքերից պաշտպանվելու համար, նույն նպատակով մեխ էին խփում խաչերկաթին, ալյուրով դռանը խաչ էին նկարում: Ամիդում ընդունված էր ամեն տանը աշտանակի վրա վառել 10-12 մոմ: Համշենում կրակով խանձում էին ծառի ճյուղեր և դրանցով թեթևակի շփում կենդանիներին:

գ. հաղորդակցություն ջրի հետ

Գրեթե բոլոր ազգագրական շրջաններում Կաղանդի կեսգիշերին գնում էին ջուր բերելու: Այդ պահին ոչ միայն ջուրն էր ոսկյա, այլև ցանկացած իր, ջուրը մտցվելով, կարող էր վերածվել ոսկու, արծաթի կամ մեկ այլ իրի: Այդ օրը ջուր չէին թափում: Ջրի առատությունը տարվա առատության նշան էր համարում, սակավությունը՝անջրդիություն: Քղիում պառավ մամը աղբյուր էր գնում տեսակ-տեսակ մրգերով և բլիթներով և կաղանդում էր, որ տարվա ջրերը մշտահոս լինեն: Ջավախքում ջրի էին գնում երիտասարդները: Ղարաբաղում ժամացույցին կատվաչ էին ասում: Իրենց հետ ջրի մոտ էին տանում շիշ, խաչերկաթ, հատիկեղեն, խոտ: Գնում էին աղմուկով,ն ստում խոտի վրա, հատիկեղենը լցնում ջուրը, և ավագն ասում էր.

Քեզի կուտամ ցորեն, գարի,
Դուն ինձի տու բարի,
Շնորհավոր նոր տարի:

Վանում հունվարի 1-ի առավոտյան կանայք, աղջիկները և երեխաները Կաղանդի ծիսական հացեղենը տանում էին աղբյուրի մոտ և թրջում ջրում: Այդ հացեղենի կտորները պահվում էին մինչև տարվա վերջ: Այդ տեղերում աղբյուրի մեջ էին նետում գարի-հաց և ածուխ, ասելով.

Առ գարի, տուր բարի,
Առ քյոմյուր , տուր յոմյուր:

## Գուշակության արարողություններ

Տարվա առաջին օրը որոշվում էր հաջորդ տարվա չարն ու բարին: Դա արվում էր տարի-հացի կամ ծիսական գաթայի միջոցով: Մեջը գրվում էր լոբու հատիկ, հոնի կորիզ կամ մետաղադրամ, որ կոչվում էր դովլաթ: Հունվարի 4-ին հացը բաժանում էին այնքան մասերի, որքան անդամներ ուներ տվյալ ընտանիքը: Ում բաժնի մեջ հայտնվեր դովլաթը, գալիք տարվա ընթացքում նա պետք է լիներ բախտավորը: Գուշակություն էին անում ձիով. Ձին բերում էին գոմի մեջտեղը, սպասում էին , որ բարձրացնի ոտքը. աջը տարվա հաջողության նշանն էր, ձախն՝ անհաջողության: Ջավախքում գուշակություն էր արվում նաև վասիլ տիկնիկների և քիսաների միջոցով: Խմորի վրա հատուկ նշաններ էին արվում, որպեսզի թխվելուց հետո իմանան, թե ում է պատկանում տվյալ խմորեղենը : Ընդ որում կանանց տիկնիկը վասիլն էր , և դրա ուռչելու աստիճանից և ձևից որոշվում էր, արդյոք հարսն այդ տարի երեխա կունենա և ինչ կլինի երեխան՝ տղա թե աղջիկ: Ըստ քիսաների ուռչելու որոշվում էր նաև տղամարդու ֆինանսական դրությունը գալիք տարվա ընթացքում:

## Տան և դրսի պատի հետ կապված արարողություններ

Տարվա առաջին լուսաբացին տանտիկինը դուրս էր գալիս և յուղ քսում պատի այն մասում, որի վրա ընկնում էր արևի առաջին շողը: Լոռում տանտիկինը մեղր էր քսում դռան վրա: Մեղորով խաչ էին նկարում նաև գոմերի դռներին: Տանտիկինը կարմիր շոր էր փռում շեմին: Ծերունիները դրսի պատին իրենց բնորոշող որևէ առարկա էին նկարում, հաճախ՝ ալյուրով :Կարմիր շորը խորհրդանշում էր երկրային բարին և առատությունը, իսկ արարողությունները կապված էին տարին ներս հրավիրելու, բարիքը տան մեջ առնելու հետ:Համշենում Նոր տարվա գիշերով դռնից ներս էին գցում պարկ, որի մեջ ընկույզ էին դնում: Այստեղ գործ ունենք կաղնդելու արարողության մի տարատեսակի հետ, որտեղ երդիկը փոխարինված է դռնով:

Կաղանդի օրը տուն են մտնում և տնից դուրս են գալիս աջ ոտքով, քանի որ աջը կապվում է հաջողության հետ:
Ջավաղքում վաղ առավոտյան ապլան այսինքն տանտիկինը հարսների հետ տարի-հացը փեռքներին դուրս էին գալիս և, դիմելով դեպի աչրելք, երեք անգամ ասում. <Դէօվլաթ, սարն ես, փորն ես, արի տուն>:

## Կալանդոսներ եվ կաղանդի երգեր

Ծեսը, որը Կաղանդ-Նոր տարվա օրը անում էին փոքր տղաները, այցելելով գյուղի բոլոր տները, բարձրանալով տանիքների վար, երգելով և նվերներ պահանջելով, կոչվում էր կաղանդել: Կաղանդել բառի հետ ամնիջական կապով՝ ծեսի ընթացքում երգվող երգերը կոչվում են կալանդոս: Ծիսական երգաշարի մեջ Կալանդոս-կաղանդոս անվանաձևը կարող էր նշանալել ,որ կաղանդելու արարողության հետ կապված երգերը ներկայանում են որպես հատուկ երգատեսակ:

## Կալանդել կամ կաղանդել, կաղընդել

Բառն ըստ Հ.Աճառյանի նշանակել է առաջին հերթին բուժել, վիրակապել կոտրված անդամը: Աճառյանը չի հիշատակում որևէ փոխառություն, ինչպես նաև չի կապում այս բառարմատը տոմարական կամ երաժշտա-բանաստեղծական հասկացությունների հետ: Բանահյուսական որոշակի նյութը հուշում է, որ կաղնդել բառն օգտագործվել է տալ, թույլ տալ իմաստով: Ե.Պողոսյանը գտնում է, որ կաղնդել նշանակում է նվեր տալ: Տարեմուտի կեսգիշերին աղբյուրից ջուր վերցնելիս երգվել է մի փոքրիկ բանաձև:

Ջրի բարին, ջրի մորին,
Անդնդային թագավորին.
Ջուր կաղնդէ իս:

Դիմողն այստեղ խնդրում է անդնդային թագավորին ջուր կաղնդել բախշել իրեն: Քղիում գիշերով բերված ջուրը առավոտյան տատը կաղնդում էր երեխաներին, որոնք ջանում էին շուտ արթնանալ: Այստեղ էլ արարողությունը տեղի էր ունենում երգերի ուղեկցությամբ.

Նէնիներ, կաղնդոս տուէք,
Տարին օրիկ մըն `.
Ամեն տարի բարով հասնինք այս օրերուս:

Տվյալ դեպքում գործ ունենք երգ- օրհնանքի հետ, որը սկսվում է ավանդական սկզբնատող-բանաձևով: Այսպիսի բանաձևը կարող էր կիրառվել նաև բուն շրջերթ-կաղնդելու ծեսի մեջ: Կաղանդել հայերեն բառիմաստների մեզ հասած տվյալները կարելի է խմբավորել ըստ գործառական իմաստների.

ա. ծիսական շրջերթ՝ ամանորյա հատուկ երգերով,

բ. հմայություն՝ ջրի, կենդանիների, բույսերի, երեխաների,

գ. տարվա նորոգում, հին և նոր տարիների միջև հանգույցի հաստատում:

Համեմատական նյութի լայն տեսադաշտի վրա հայկական նյութի խորազնին դիտարկումը թույլ է տալիս հաստատել, որ կալանտա, կոլյադա, կոլենդա և նման անվանաձևերով երգերի հայկական զուգահեռը ավետիսն է և ոչ կալանդոսը: Թվում է, թե հայերի մոտ շրջել-կաղանդելը և ավետիս անելը նույն երևույթի տարբեր անվանաձևերն են , թեպետ տիրապետող է այն պատկերացումը, որ պատմականորեն ավետիսը կապվել է Սուրբ Ծննդյան, իսկ կալանդոսը՝ Նոր տարվա հետ: Կաղանդի գրառված երգերը շատ ավելի քիչ են, քան ավետիսները:

## *ԱՄԱՆՈՐ*

***Ամերիկայում*** ավելի շատ ուշադրություն է դարձվում ոչ թե նվերին, այլ փաթեթավորմանը: Ծննդյան տոնի օրը բոլորը կարող են ժամերով և մեծ

ուրախությամբ բացել նվերը, որը կաղամբի նման փաթաթված է բազմաթիվ թղթերի մեջ:

***Բուլղարիայում*** ավանդույթի համաձայն Նոր տարին դիմավորում են տանը: Տոնակատարության սկզբից տան կրտսերը կանգնում է տոնածառի մոտ և երգում, իսկ մեծահասակները նրան նվերներ են մատուցում: Սակայն ամենահետաքրքիրը սկսվում է 00:00-ին հնչող ղողանջներից հետո, երբ մի պահ անջատվում է լույսը ամանորյա համբույրների համար: Դրանից հետո միայն տանտիրուհին սկսում է կտրտել ամանորյա անակնկալ-կարկանդակը: Եթե կարկանդակի միջոցով բաժին է հասնում կոպեկ՝ կբերի հարստություն, իսկ վարդի ճյուղը կբերի սեր: Այդպիսի «թխվածքային անակնկալներե ընդունված են նաև Ռումինիայում և Ավստրալիայում:

Տոնի նախօրեին ***Իսպանիայում*** ցանկացած տեղ գնալիս պայուսակի մեջ պետք է լինի մի քիչ նուգա և շամպայն: Նոր տարին իսպանացիների համար հանրային տոն է, և հենց այդ տոնական գիշերը բոլորը շտապում են կենտրոնական հրապարակ՝ այնտեղի մեծ տոնածառի մոտ Ամանորը դիմավորելու և խաղող ուտելու համար: Ժամացույցի ղողանջների ընթացքում հրապարակում հավաքվածները փորձում են հասցնել ուտել խաղողի 12 հատիկ: Յուրաքանչյուր հատիկը խորհրդանշում է տարվա ամիսը, իսկ եթե հասցնում են ուտել բոլոր 12 հատիկները, ապա դրանով գրեթե «երաշխավորվումն է բաղձալի երազանքի կատարումը: Ի դեպ, այս ավանդույթը տարածվում է նաև նրանց վրա, ով Նոր տարին դիմավորում է տանը: Խաղողի հատիկները դրվում են բոլոր ամանների մեջ:

***Մեծ Բրիտանիայում*** նվերները պատվիրում են «Father Christmas»-ին (բառացի նշանակում է Ծննդյան Հայր): Նրան նամակ են գրում՝ մանրամասն թվարկելով թե ինչ են ցանկանում և բացատրելով, թե ինչու: Նամակն այնուհետև գցում են բուխարու մեջ: Ծխնելույզից դուրս եկող ծուխը ճիշտ տեղը կհասցնի ուղարկված նամակը: Ի դեպ, բրիտանացիների նվերները գրեթե նույն արժողության են, իսկ կարգի համաձայն դրանք բաժանվում են վիճակահանության միջոցով:

Իսկ ***Իտալիայում*** անցնող տարվա վերջին օրը բոլոր պատուհաններից դուրս են թափում անպիտան իրերը:

Ծննդյան օրերին ***Չինաստանում*** հայտնվածներն առաջին հերթին նկատում են Լույսի Ծառեր: Դա մեր տոնածառի նախատիպն է: Լույսի Ծառերը զարդարվում են արևելյան ճոխությամբ, վառ լապտերիկներով, ծաղիկներով և ծաղկաշղթաներով: Նույն ձևով զարդարվում են նաև տները: Տոնի նախօրեին փոքրիկ չինացիները տան պատերին գուլպաներ են կախում, որտեղ

Դուն Չե Լաո Ռենը՝ Ծննդյան Պապիկը, դնում է իր նվերները:

***Ֆրանսիայում*** մարդիկ կարող են միմյանց ամեն ինչ նվիրել, չնայած կան որոշակի կանոններ: Օրինակ՝ օծանելիք կարող է նվիրել միայն ամուսինն իր տիկնոջը: Այլ տղամարդուց նմանատիպ նվերը համարվում է «կանոններից դուրս»:

***Գերմանիայում*** Սուրբ Ծնունդը ընտանեկան տոն է: Բոլորը պետք է հավաքվեն տոնական սեղանի շուրջը: Այդ օրը տեղի ունեցող նվերների փոխանակման արարողությունը կոչվում է «Բեշերունգե: Ամանորի ճաշկերույթի ամենակարևոր մասը կոչվում է «der Lebekuchen» մեղրաբլիթ-քաղցրաբլիթը: Ալյուրից, շաքարից և չամիչից պատրաստված այդ «իսկական հրաշքը» 16-րդ դարում երբեմն կարող էր մեկ երկար նստարանի չափ լինել:

***Էստոնիայում***, ինչպես նաև Ավստրիայում և Շոտլանդիայում երջանկություն նոր տարում կբերի փողոցում հանդիպած ծխնելույզ մաքրողը, որը պարտադիր ձեռքին պետք է ունենա աշխատանքի համար անհրաժեշտ իրերը: Շոտլանդիայում Ամանորի գիշերը նաև գնում են հարևան-բարեկամների տուն՝ նախապես վերցնելով մի կտոր քաղցրաբլիթ, մեկ գավաթ գինի և մի փոքրիկ կտոր ածուխ: Շոտլանդացիների տեսանկյունից դա ամենալավ ձևն է ամբողջ տարվա համար ապահովելու սննդամթերք, խմիչք և տաքություն:

*Ճապոնիայում* կա ավանդույթ. Ամանորից առաջ միմյանց նվիրում են բացիկներ այն կենդանու պատկերով, որի տարին գալիս է: Սակայն ճապոնական տան հիմնական զարդարանքը «կադոմացուե-ն է (ելքի մոտի սոճի): «Կադոմացու»-ն յուրօրինակ ողջույն է Նոր տարվա սրբին: Սովորաբար «կադոմացու»-ն պատրաստում են սոճիից, բամբուկից և բրնձի հյուսված ցողուններից: Ճապոնացիներն իրենց տունը զարդարում են նաև ձարխոտի և մանդարինի տերևներով: Ի դեպ, Նոր տարվա առաջին վայրկյաններից ճապոնացիները սկսում են ծիծաղել, քանի որ համոզված են, որ ծիծաղը նոր տարում իրենց հաջողություն կբերի:

*Ամանորը Հայաստանում*

Մեզ հասած պատմագիտական, բանահյուսական, ազգագրական և հնագիտական տվյալների համաձայն հայերն ունեցել են երեք նոր տարի, որոնք կոչվել են Ամանոր, Նավասարդ, Կաղանդ:
Վաղնջական ժամանակներում մեր նախնիները նոր տարին դիմավորել են մարտի 21-ին՝ գարնանային գիշերահավասարի օրը: Դա տարեգլխի պատահական ընտրություն չէր: Այդ հեռավոր ժամանակների հայ քրմերը բազմամյա դիտարկումներով նկատել էին, որ բնությունը հարություն է առնում գարնան սկզբին: Այդ օրն էլ հայ մարդը դարձրել է նոր տարի կամ տարեգլուխ և նշել ցնծալի տոնախմբությամբ, որով փառաբանել է բնության զարթոնքը, հողագործի անդուլ աշխատանքը, աստվածներին աղերսել, որպեսզի տարին բերքառատ դարձնեն:
Հայոց երկրորդ տարեգլուխը եղել է նավասարդի 1-ը (օգոստոսի 11-ը): Ըստ ավանդության՝ Հայկ Աղեղնավորը Հայոց ձոր գավառում սպանել է բռնակալ Բելին և ազատագրություն պարգևել իր տոհմին ու ցեղակիցներին: Այդ հաղթությունը ենթադրաբար տեղի է ունեցել 4500 տարի առաջ՝ Ք. ա. 2492 թ. օգոստոսի 11-ին, որն էլ դարձել է հայոց նոր տոմարի սկիզբը:
Միջնադարյան նշանավոր տոմարագետ Հովհաննես Սարկավագը հավաստում է, որ եբրայեցիների տոմարի հիմնադիրը Մովսեսն է, իսկ հայոց տոմարինը՝ Հայկը:

Նավասարդը հին հայոց տոմարի առաջին ամիսն էր, որ հաջորդել է տարվա վերջին՝ ,Ավելյացե կոչվող տոնական հինգ օրերին: Նավասարդի առաջին օրերին կատարվել են Համաշխարհական բազմամարդ տոնահանդեսներ: Ուխտավորները՝ ժողովուրդը, զորքը, արքունիքը, նախարարական գնդերը, քրմերը հանդիսավոր երթերով խմբվել են Տարոն և Բագրևանդ գավառների սահմանագլխին, սրբազան Արածանի գետի և Նպատ լեռան շուրջ՝ Բագավանի տաճարում՝ տոնելու Արամազդ աստվածահոր, Անահիտ դիցամոր և ,Ամանորյա ամենաբեր դիցե նվիրական հիշատակը: Տոնահանդեսներն ուղեկցվել են զոհաբերություններով, փոխադարձ նվիրատվություններով, խրախճանքներով, երգ-երաժշտությամբ, պարերով, թատերախաղերով, ռազմախաղերով, զանազան մրցություններով, որսորդական զվարճություններով, գուշակություններով:
Հին հայերի պատկերացմամբ՝ իրենց աստվածներն ու աստվածուհիներն այդ օրերին Եփրատ և Արածանի գետերում լողանալուց հետո բարձրացել են ձնապատ լեռների կատարները և դիտել այդ խրախճալի տոնահանդեսները, հովանավորել ուխտավորներին: Ստրաբոնը վկայում է, որ ծիսական օրերին հայ ազնվականուհիներն իրենց կուսությունը զոհաբերում էին սիրեցյալ երիտասարդներին՝ դրանով իբր սրբագործելով արգասավորությունը:
Նավասարդի տոնախմբություններին սովորաբար զոհաբերում էին նախապես աստվածներին նվիրաբերված երինջներ ու ցուլեր, որոնց արյունով ներկվում էին բոլորը՝ ի նշան մաքրության և նոր կյանքի սկզբնավորման: Նավասարդյան այդ նվիրական օրերին արձագանքն է Արտաշես արքայի բաղձանքը.
,Ո՜տայր ինձ զծուխ ծխանի,
Եւ զառաւօտն Նաւասարդի.
Զվազելն եղանց և զվազելն եղջերուաց.
Մեք փող հարուաք և թմբկի հարկանէաք,
Որպես օրէնն է թագաւորացե:
Տոնախմբությունը տևում էր մի քանի օր, որոնցից մեկը կոչվում էր ,Գինարբուքի օրե: Մարդիկ խմում էին քաղցր հյութեր, թեթև խմիչքներ:

Նավասարդավորների մեջ հարբեցողներ հազվադեպ են եղել: ,Աստվածներն ամենից շատ որոմ են թողնում հարբեցողի արտումե,— ասում է հայկական հնագույն առածը: Այդ տոների ժամանակ նույնիսկ ուտելիքն է չափավոր եղել (իհարկե, ուտելիքի ընդհանրական ցանկ չի եղել, որ պարտադիր լիներ Հայաստանի բոլոր կողմերի բնակիչների համար): Չմոռանանք, որ Հայաստանը բազմազան կլիմա ունեցող երկիր է եղել, և անգամ իրար հարևան գավառներում նույն բերքն ու բարիքը չեն ստացել: Տարբեր գավառներում տարբեր ուտեստներ են օգտագործվել: Եղել են նաև ընդհանրական որոշ կերակուրներ, օրինակ՝ հայկական կլորահատիկ ցորենի հացը: Այդ ցորենն աճում էր միայն Հայաստանում: Հենց այդ ժամանակներին է վերաբերում հին ասացվածքը. ,Նոր տարի հաց չեն փոխ առնումե, այսինքն Նոր տարվա սեղանին քո թխած հացը պետք է դնես: Մեկ այլ ասացվածք. ,Առանց գինու՝ Նոր տարին կգա, առանց նգածաղիկի՝ կուշանա: Հնում նգածաղիկն ամենահոչակավոր հայոց համեմունքն էր: Ախորժաբեր այդ ծաղիկն աճում էր Մասիսի լանջերին, այն քաղում և չորացնում էին Մասյացոտն ու Ճակատք գավառների հայերը և տարածում Հայաստանով մեկ: Հայը, որ գավառում էլ ապրեր, տարեմուտին ըմբոշխնում էր սքանչելի նգածաղիկը: Այս սովորության մեջ նաև ազգի միասնության գաղափարը կար: Նգածաղիկը բոլոր հայերին շաղկապում էր Մասիսի հետ, ողջ հայ ժողովուրդն իրեն կապված էր զգում Մասիսին, Միջնաշխարհին՝ հայրենիքի սրտին:
18-րդ դարում Սիմեոն Երևանցի կաթողիկոսի տոմարով հունվարի 1-ն ընդունվեց որպես Նոր տարվա սկիզբ: Ընդսմին հունվարի 1-ի ուտեստների թվում կան ,նե տառով սկսվող մի քանի մթերք՝ նգածաղիկ, նուռ, նաշիհ՝ ալյուրից թխված հաց, նուշ և այլն: Ն սկզբնատառով ընտրված ուտեստները կրում են Նավասարդի խորհուրդը:

Տոմարային փոփոխությունների պատճառով Ամանորը խորհրդանշող տոնը հայոց կենցաղում տարբեր ժամկետներում է նշվել, բայց դարեր շարունակ հայկական տոնածիսական համալիրում ամենասիրվածն ու տարածվածն է եղել: Հունվարի 1-ին նշվող քրիստոնեական Ամանորը միայն 17-րդ դարի կեսերից է մուտք գործել հայ իրականություն և երկար ժամանակ

զանգվածային չի եղել: Նույնիսկ 18-րդ դարում Սիմեոն Երևանցի կաթողիկոսի մշակած հայոց եկեղեցական տոնացույցում Տարեմուտ կամ քրիստոնեական Նոր տարի է համարվել ոչ թե հունվարի 1-ը, այլ հունվարի 6-ը՝ Քրիստոսի Ծննդյան օրը: Պատմական Հայաստանում և հայոց գաղթօջախներում 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին տարեմուտի տոնը հայտնի է եղել «Նոր տարի», «Ամանոր», «Կաղանդ», մասամբ նաև՝«Նավասարդ», «Տարեգլուխ» և «Ավետիս» անուններով: Ըստ էթնոսոցիոլոգ Սամվել Մկրտչյանի՝ ամանորյա արարողություններն աչքի են ընկել ժողովրդական ծեսերի, սովորույթների և հավատալիքների բազմազանությամբ, որոնք հիմա գրեթե չեն պահպանվել: Մեծ տարածում են ունեցել հատկապես անձի ճակատագրի գուշակությունները: Օրինակ՝ մեր նախնիները հավատացել են, թե Նոր տարվա նախորդ գիշերը հոսող ջրերը մեկ վայրկյան ոսկեբեր են դառնում: Պատանիներն ու աղջիկներն այդ երեկո գնացել են իրենց ավանդական ուխտավայրի մոտ գտնվող աղբյուր՝ սպասելով հրաշալի ակնթարթին, որպեսզի ջրի հետ նաև բարիք տանեն տուն: Դրա ակնկալությամբ աղբյուրների գուռերի մեջ նետել են ցորեն, գարի կամ հաց ու բլիթ: Մեկ այլ սովորույթի համաձայն տարեվերջի գիշերն աղջիկները ձուն դրել են թոնրի վրա գտնվող ամանի մեջ: Եթե առավոտյան ձուն սևացած են գտել՝ տխրել են իրենց անհաջող բախտի համար, իսկ կարմիրի դեպքում՝ ուրախացել, թե այդ տարի հաջողությունն անպայման կժպտա իրենց: Հնում հայերը հավատացած են եղել՝ եթե տարեմուտի գիշերը գետից կամ աղբյուրից կժով ջուր վերցնեն, այն անմիջապես ոսկու կփոխակերպվի, կամ եթե այդ պահին որևէ առարկա սուզեն ջրի մեջ՝ այն կստանա մտապահած ցանկալի իրի պատկերը: Պատահական չէ, որ այդ գիշեր տան ջուրը թափելն արգելվել է: «Տոնի կապակցությամբ պատրաստում էին թխվածքներ՝ քսակի, հյուսքի, կովի կրծքի, կենդանու սմբակների, ցորենի հորերի և այլ պատկերներով՝ հավատալով, որ դրանք կնպաստեն հարստանալուն, աղջիկների մազերի երկարելուն, կովերի կաթի և ցորենի առատությանը: Իսկ տանտիկինները մի քիչ մեղր էին քսում տան դռանը և կարմիր մի շոր որևէ տեղ փռում՝ տարին քաղցր ու կարմիր անցկացնելու ակնկալիքով: Այնուհետև մի գիրկ փայտ էին բերում և լցնում օջախն ու շնորհավորում որդիների ու հարսների Նոր տարին: Վերջիններիս

բերաններին տանտիրուհին մեղր էր քսում, իսկ երեխաներին մրգեր ու ասիլ-բասիլներ (փոքրիկ մարդակերպ հացեր՝ համեմված քիշմիշով) էր բաժանում: Նշանված աղջիկը Նոր տարու առաջին օրը նշանածին գաղտնի նվիրում էր իր իսկ պատրաստած «փնջած խնձորը»,— պատմում է Սամվել Մկրտչյանը:

### *Զմեռ պապ կամ Մենծ Պապուկ*

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հայերի ամանորյա ծիսաշարում տոնածառն ու Զմեռ Պապն աննշան տեղ են գրավել, քանի որ երկուսն էլ օտարածին երևույթներ են: Իսկ եղևնի զարդարելու սովորությունը Հայաստանում արմատավորվել է միայն 20-րդ դարի 30-40-ական թվականներին: Ս. Մկրտչյանի վկայությամբ մեր օրերում Զմեռ Պապը, Զյունանուշն ու եղևնի զարդարելու սովորույթը տոնի ամենատարածված բաղադրիչներն են, դա սկիզբ է առել Գերմանիայիում. 1513թ. այդ ծեսի հիմքը դրել է Մարտին Լյութերը՝ եղևնին զարդարելով մոմերով: Հետագայում այն տարածվել է այլ հանրույթներում, նաև՝ հայոց կենցաղում: Օրինակ՝ Համշենում, Պոնտոսում, Բարձր Հայքում տոնածառը ոչ թե եղևնին է եղել, այլ ձիթենին, որի ճյուղերը եկեղեցում օրհնելուց հետո տարել են տուն և խրելով ծիսական հացի մեջ՝ տեղադրել սեղանի կենտրոնում: Ձիթենու ճյուղերը զարդարել են կաղինով, ընկույզով, չրերով և մրգատեսակներով: «Մեր նախնիները հավատացած են եղել, թե Կաղանդի զարդարված ծառն ընտանիքին հաջողություն է բերում, իսկ այսօր տոնածառի զարդարումն ունի զուտ խաղային և գեղագիտական նշանակություն»,— նկատում է Ս. Մկրտչյանը:

Ըստ հայ ժողովրդական տոների գիտակի՝ թեպետ Զմեռ պապը հայոց կենցաղում օտարածին է, մեր իրականության մեջ գոյություն է ունեցել Սահակ Պարթևի հետ կապված «Մենծ Պապուկի» ավանդազրույցը, որի կերպարը մասամբ Զմեռ պապիի նկարագրին է նման: Սահակ Պարթևը ժամանակին երեխաների սիրած Սուրբն է եղել, նրան կոչել են Մենծ Պապուկ: Այդ ավանդազրույցի համաձայն՝ Սուրբ Սարգսի տոնին հաջորդող օրերին երեխաները ծնողներին հարցրել են, թե երբ է գալու Մենծ Պապուկը: Ու երբ ընտանիքի անդամները սեղանի շուրջ նստած են եղել, մեծերից մեկն

աննկատ դուրս է եկել սենյակից և հանկարծակի ներս մտել՝ գլխին սրածայր քոլոզ: Նա մեկական գավաթ գինի հյուրասիրելով՝ ասել է. «Եկավ Մենծ Պապուկը, հազար բարով մեր Բարեկենդան»: Սահակ Պարթևի տոնից սկսվել է Բարեկենդանի՝ գարնանային Նավասարդի կամ ավանդական Նոր տարվա խրախճանքը: «Նոր տարվա ներկայիս ահռելի ծախսերն ու քաղքենիության երանգավորումները տոնի բովանդակության հետ ընդհանրություններ չունեն: Տոնի խորհուրդներից մեկը տնտեսական պայմանավորվածությունների, պարտքուպահանջի սահմանագիծն էր, այսինքն պարտքերի մարումը, ուստի պարտք չէին վերցնում: Եթե հավատանք այդ մոգական խորհրդին, պարտք վերցնողը ողջ տարի պարտքի տակ պիտի ընկներ: Իսկ հիմա հակառակ գործընթացն է տեղի ունենում»…

Որոշ տեղեկությունների համաձայն տոնածառի առաջին խաղալիքները հայտնվել են Սակսոնիայում՝16-րդ դարում: Այլ աղբյուրներ էլ փաստում են, որ տոնածառի առաջին ապակյա գնդակները պատրաստվել են 1848 թվականին՝ Տյուրինգի Լաուշա տարածքում, այնուհետև դրանք սկսեցին արտադրվել Սակսոնիայում՝19-րդ դարի կեսերին: Հետո ստեղծվեցին բարդ պատկերներ՝թռչուններ, խաղողի ողկույզներ: Ռուսիայում տոնածառի առաջին խաղալիքները պատրաստվել են լապտերից, ծղոտից, գունավոր ժապավեններից, իսկ հետո՝ավելի ուշ՝ թղթերից և փայլաթիթեղից: Այդ արտադրությամբ զբաղվում էին հատուկ ստվարաթղթի արհեստանոցներ: Ապակյա զարդարանքները հայտնվել են ավելի ուշ: Առաջին անգամ Ռուսաստանում տոնածառի ապակյա խաղալիքների արտադրությունը բացվել է Կլինում՝19-րդ դարի սկզբում, միապետ Միշկովայի անունով: 1917 թվականից հետո Սուրբ Ծննդյան տոնածառը զարդարելը արգելված էր բոլշեվիկների կողմից, բայց արդեն 30-ականներին վերականգնվեց տոնածառը զարդարելու ավանդույթը: Սովետական առաջին զարդարանքները արտադրել է էլեկտրոլամպերի գործարանը: Խաղալիքների հատուկ արտադրությունը հայտնվեց ավելի ուշ:

***Ամանորի ուտեստներ***

Սարիգյուլ տատ, 74 տարեկան, Կոտայքի մարզ, գյուղ Գետաշեն.

Ալաշկերտում Նոր տարվա տոնական սեղանին դրել են պասուց տոլմա, հալվա ու մեղր՝ որպես քաղցրության նշան, աղանձ՝ երկարակեցության նշան, կլոր գաթա՝ արևշատության նշան և մաճառ: Սեղանի զարդն էր Տարի հացը, որի վրա գրվում էր տան անդամների անվան սկզբնատառերը: Խմորի մեջ դրվում էր մանրադրամ կամ կոճակ և թխվում: Նոր տարին մանրադրամի տիրոջը հաջողություն էր բերելու:

Մարիամ տատ, 85 տարեկան, Ջավախք.

Ամանորյա սեղանին Ջավախքում դնում էին չիր ու չամիչ, դրանցից պատրաստված օշարակներ: Տան կենդանիների պատկերով գարու և ցորենի բոքոններ էին թխվում, բաժանում նույն այդ կենդանիներին՝ ի նշան արգասավորության: Տան ավագը ճիպոտը խփելով պատերին՝ օջախից վանում էր չար ուժերին և անուշաբույր խունկ վառում՝ ի նշան երջանկության և բախտավորության: Լույսը չբացված՝ առաջինն այցելում էին օջախի քավորին, ապա՝ ըստ ավագության: Սեղանի զարդն էին Տարի հացը, պասուց տոլման:

Ամանորի սեղանին տատս անպայման դնում էր պասուց տոլմա՝ կանեփով, տապակած ավելուկ՝ ընկույզով, արևածաղկի ձեթով, առատ սոխով, իսկ նոր տարվա հաջորդ օրը եփում էր հարիսա և չորաթանով սպաս:

***Պասուց տոլմա կանեփով***

Բաղադրատոմս՝

0,5կգ աղացած ձավար, 1բաժակ լոբի, 1բաժակ սիսեռ կամ ոլոռ, 1բաժակ հաճար, կես բաժակ ոսպ, 5-6 գլուխ սոխ, կարմիր պղպեղ, չոր կանաչի, կանեփի յուղ, որն ստանում են կանեփն աղալով:

Պատրաստման եղանակը

Մեկ օր առաջ ջրով թրջել կանեփը, լոբին, սիսեռն ու ոսպը: Կանեփն աղալ ձավարաղացով, առանձնացնել հեղուկ մասը, որի մեջ արդեն առանձնացած է լինում յուղը: Թեթևակի խաշել թրջած ընդեղենը, լվանալ ձավարն ու հաճարը և այս ամենը խառնել իրար: Սոխը մանր կտրտել, վրան ավելացնել չորացրած խառը կանաչի, կարմիր պղպեղ, խառնել ստացված զանգվածին,, աղ ավելացնել, լավ խառնելուց հետո փաթաթել թթու կաղամբով,վրան լցնել կանեփի ջուրը, եփել մարմանդ կրակով:

***Չորաթանով սպաս***

Անհրաժեշտ է 6-8 հատ չորաթան, 2 բաժակ ոսպ, 300գ արիշտա, 3 գլուխ սոխ, 2-3գդալ ալյուր, 2 ձու, 0,5կգ կարագ:

Եփելուց 3օր առաջ կավե ամանի մեջ թրջել չորաթանը, որից հետո տրորել այն՝քսելով ամանի պատերին/աստիճանաբար ջուր ավելացնել/: Ստացված թանի մեջ լցնել ալյուրը, հարած ձուն, ոսպը և եփել մարմանդ կրակի վրա՝անընդմեջ խառնելով մինչև եռալը: Նախօրոք պատրաստել սոխառած: Երբ ոսպը եփվի, ավելացնել աղ և արիշտա: 10-15 րոպեից հետո սպասը պատրաստ է: Սոխառածը կարելի է լցնել սպասի վրա. կամ մատուցել առանձին: Սպասի հետ մատուցել լավաշ:

***Տապակած ավելուկ***

Անհրաժեշտ է 1 կապ ավելուկ, 4-5 գլուխ սոխ, 0,3լ ձեթ, 8-10 ընկույզ, աղ:

Ավելուկը մանր կտրտել, թրջել տաք ջրով, լավ լվանալ, ջուր լցնել վրան, դնել կրակին, երբ ջուրն հասնի եռման աստիճանի, այն թափել, նորից լվանալ, վրան ավելացնել 1լ ջուր, եփել մինչև պատրաստ լինելը: Հետո անել սոխառած՝ մեջն ավելացնելով ընկույզ: Ավելուկը քամել, լցնել մեջը, ավելացնել աղ, լավ խառնել, մարմանդ կրակի վրա թողնելով 10 րոպե: Մատուցել սառը վիճակում՝ սխտորի ու քամած մածնի հետ:

***Ավելուկով ապուր***

Անհրաժեշտ է 300գ ավելուկ, կես բաժակ ոսպ, 0,5 բաժակ բլղուր, 2գլուխ սոխ, կարմիր պղպեղ, 2գդալ ալյուր,սովորական, կամ էլ՝կանեփի յուղ:

Ավելուկը եփել, վրան ավելացնել ոսպն ու բլղուրը: Եփելու ընթացքում լցնել ալյուրի խյուսը:Եթե սովորական յուղով ենք պատրաստելու, պետք է սոխառած անել, լցնել վրան, աղով,պղպեղով, համեմել: Իսկ կանեփով եփելու դեպքում պետք է սոխը, կանեփի յուղը, կանաչին, պղպեղն ու աղը մի քիչ եփել միասին, նոր ավելացնել: Մատուցել տաք վիճակում՝լավաշի, սխտորի ու թթվի հետ:

***Թանով խյուս***

Ցանկալի է եփել խնոցու թանով ու կարագով:

Անհրաժեշտ է 2լ թան, 2 բաժակ աղացած ձավար,.աղ, կարագ:

Թանի մեջ լցնել ձավարը, խառնելով եփել  մինչև պնդանալը: Հետո աղ ավելացնել, հարել այնքան, մինչև միասեռ զանգված դառնալը: Մատուցել տաք վիճակում՝ կարագի ու լավաշի հետ:

Ամանորյա տոնածիսական սեղանը բնականաբար տարբերվում էր մերօրյա տոնական սեղանից: Ավանդական Նոր տարին ուտիս օր չէ, այն պաս օր է: Եվ որքան էլ առատ լիներ սեղանը, մսեղեն կերակրատեսակները բացառվում էին: Գերապատվությունը տրվում էր հատիկեղենին՝ լոբի, ոսպ, քաղցրավենիքներին: Այժմ գրեթե մոռացված է հատիկեղենի նշանակությունը Նոր տարվա սեղանին: Մինչդեռ բոլորովին պատահական չէ հատիկեղենի կիրառումը: Հատիկը առհասարակ բոլոր մշակույթներում խորհրդանշում է կյանքն ու պտղաբերությունը, մահն ու վերածնունդը: Այն նման է սաղմի, այն թաղվում է հողում, խորհրդանշորեն մահանում է, ապա կրկին վերակենդանանում՝ ծիլ տալիս: Հատիկեղենը կամ դրանից պատրաստված կերակուրները առկա են բոլոր տոմարային տոների ծիսաշարում՝ հարիսան՝ Նավասարդին, Բարեկենդանին և Ս. Ծննդին՝ որպես ծիսական կարևորագույն ուտեստ, ձավարով պատրաստված կաթնապուրը՝ Ծաղկազարդին:

*Տարեհաց*

Թխվում էր թարմ հաց, նույնիսկ եթե տանը կար բավականաչափ հաց: Հացը հայերի մոտ պաշտվել է: Կովկասյան մի շարք ժողովուրդներ (աբազներ, աբխազներ) հաց ասվածը, որպես այդպիսին չունեն: Հացին փոխարինում է обыста կոչվող դոնդողանման զանգվածը: Հավանաբար այստեղից էլ паста բառը:

Նոր տարվա կարևորագույն ուտեստն էր տարի հացը, տարեհացը, որը ևս խորհրդանշական հիմք ունի: Տարեհացի մեջ դրվում էր «դովլաթը»՝ գուշակության դրամը: Տարեհացը զարդարում էին ամենատարբեր սիմվոլներով՝ հիմնականում տիեզերական, բաժանում էին 12 մասի:

**Բաղադրատոմս**

Մածուն 1լ, մարգարին կամ կարագ 250 գր., շաքարավազ 1 ճաշի գդալ, սոդա 1 թեյի գդալ, ձու 5 հատ, թթվասեր 500 գր., կանեփ 1 բաժակ, ալյուր այնքան, ինչքան կվերցնի խմորը:

Մածունը, թթվասերը և կարագը խառնել իրար, հարել, քիչ-քիչ ավելացնել ձուն և շաքարավազը: Ավելացնել սոդա և մի փոքր կանեփ, ապա այնքան ալյուր, որ ստացվի շատ պինդ, ոչ շատ թույլ խմոր:

Խմորի երեսին քսել կանեփով համեմված ձվի դեղնուց և դնել ջեռոցը:

*Մարդակերպ գաթաներ*

Ամանորի տոնածիսական համալիրի մեջ կարևորագույն տեղ են զբաղեցրել ասիլիկ-վասիլիկները կամ ուղղակի վասիլները, երբեմն՝ բասիլները: Սրանք մարդակերպ փոքրիկ գաթաներ էին, կարող էին ունենալ նաև առարկաների ու կենդանիների տեսք՝ եզների, քսակի, կովի: Վասիլիկները թխվում էին թոնիրներում և ըստ նրանց ուռչելու, փքվելու աստիճանի որոշում էին, թե ինչ է լինելու հաջորդ տարում: Օր. տան երիտասարդ հարսի կերպարանքով վասիլիկ էին պատրաստում, եթե թխվելիս այն փքվում էր, հավատում էին, որ տանը երեխա կծնվի:

**Բաղադրատոմս**

1 կգ ալյուր, ջուր այնքան, ինչքան կվերցնի, աղ: Հունցել խմորը, թողնել 20 րոպե հանգստանալու և հասունանալու: Հացիկները ձևավորել մարդու տեսքով՝ աչքերի և բերանի տեղերում, կրծքին դրած ձեռքերի վրա չամիչ խրելով:

***Հարիսա***

Ս.Ծննդի ծիսական հարիսայի հետ պիտի հաղորդակցվեին տան բոլոր անդամները, ընդհուպ մինչև նորածինները: Տանտիկինը հարիսայի յուղից քսում էր նորածնի շուրթերին՝ որպես պարտադիր հաղորդակցություն սրբազան ուտեստի հետ: Ընդ որում՝ հոգեպես անմաքուր, մեղավոր մարդն իրավունք չուներ ուտելու հարիսան:

**Բաղադրատոմս**

Հավ `1 կգ, ձավար 1կգ, աղ 30 գր., կարագ՝ 400 գր.:

Հավը ոսկրազատելուց հետո ոսկորներից ստանալ արգանակ: Արգանակի մեջ լցնել ձավարը և հավի փափկամիսը: Եփել թույլ կրակի վրա՝անընդհատ խառնելով մինչև միսն ու ձավարը լուծվեն իրար: Ավելացնել աղ, կարագ կամ յուղ: Ցանկալի է մատուցել հալած յուղով:

***Մայրամաճաշ***

Երբ գնում էին շնորհավորելու, անպայման հետները տանում էին անուշապուր կամ այլ անունով մայրամապուր: Իհարկե, անունը կապ ունի Աստվածածնի հետ:

**Բաղադրատոմս**

Սոխ՝ 200 գր., սիսեռ՝ 300գր., չորացրած սմբուկ՝ 300 գր., լոլիկ՝ 300 գր., պղպեղ՝ 200 գր., լոբի չորացրած 200 գր., կարագ 100 գր., աղ՝ 30 գր., չորացրած կանաչի՝ 20 գր., կարտոֆիլ՝ 400 գր., տոմատի մածուկ ՝ 50 գր.:

Սոխը մանր կտրտելուց հետո սոխառած անել տոմատի մածուկով, ավելացնելով կարմիր աղացած պղպեղ: Նախօրոք թրջած բանջարեղենը ջրքամել, սիսեռը խաշել: Եփվող սիսեռի վրա ավելացնել կարտոֆիլ, բանջարեղեն: Եփել մոտ 15-20 րոպե: Վերջում ավելացնել սոխառածը, կանաչի, ցանկալի է համեմ և ռեհան:

***Մայրամապուր***

**Բաղադրատոմս**

Ծեծած կորկոտ 50գր., չամիչ 20 գր., ծիրանի չիր 20գր., սալորի չիր 25 գր., դոշաբ 35 գր.: Պատրաստման եղանակը՝ ծեծած կորկոտը, չամիչը, չոր ծիրանն ու սալորը միասին եփվում են: Եփելուց հետո դոշաբ են լցնում:

***Տոնածառի պատմությունից***

Արդեն միջնադարում սովորույթ էր դարձել ամանորյա տոներին ծառեր զարդարելը: 1419թ.Ֆրայբուրգ քաղաքում առաջին անգամ դրվեց տոնածառ, որը զարդարեցին մրգերով և ընկույզով:Ընդհանրապես երեխաները իրավունք ունեինդրանքհամտեսելումիայն ամանորին՝ երբ թափէին տալիս ծառը: 1539 թվականից մեզ հասած մի գրությունից հայտնի է դառնում, որ Ստրասբուրգում այդ տարի տոնածառ է դրվել:1730 թվականին տոնածառի վրա առաջին անգամ մոմեր դրվեցին: Կաթոլիկ եկեղեցին վաղ շրջանում դեմ էր տոնածառ դնելուն, քանի որ Սուրբ Ծննդյան տեսարանը (որը ավանդույթ է մի շաք եվրոպական երկրներում) արդեն իսկ խորհրդանշում է ամանորը: Այս փաստը կարելի է բացատրել նաև նրանով, որ նախկինում շատ անտառներ պատկանում էին եկեղեցուն, իսկ ամանորին մարդիկ կտրում էին անտառի ծառերը, որպեսզի տոնածառ ունենան:

Բեռլինում առաջին տոնածառը դրվել է 1785թ., իսկ Վիեննայում՝ 1816թ. Հենրիետտե ֆոն Նասաուի կողմից:

Այս սովորույթը 18-րդ դարում շրջագայողների միջոցով հասավ ԱՄՆ: Առաջին տոնածառը Սպիտակ տանը դրվեց 1891թվին :